

հարկեցան զայլ դք ընտրել» (Չամչեան Գ. էջ 872), զոր եւ կը հաստատէ Գրիգոր Պատրիարք Պասմաճեան (15 Մայ. 1764—1773 Նոյ. 1 վերջը) «Յիշատակարան, ին մէջ (Բաբգէն Վ. «Բանասէր» 1905 էջ 91—94) յիշելով՝ Թէ սոյն ընտրութեան առթիւ Սամուէլ Եպիսկոպոս գրած է. «Ես զիմ սեփհական Թէմիս եւ վիճակիս զմէկ ծեր պառաւն ձեր բոլոր պատրիարքութեան չեմ փոխանակել, զի ըստ որում ընդ այն վիճակի եմ պսակեալ յառաջագոյն»:

Այսչափ է իր մասին ցայսօր հրատարակուածները. սակայն զարմանալի է, որ եւ ոչ մէկը կը յիշէ իր կեանքին վերջին մեծ դրուագը, որ այն ժամանակ ամբողջ Կ. Պոլսի Հայերը սարսեց սասանեցուց:

Սարգիս Աբբեպ. Սարաֆեանի Թղթերուն մէջ (Դիւ. 1 հիւլ.) կան Սամուէլ Եպիսկոպոսիս ինքնագիր մէկ նամակը եւ այլոց նամակները, որոնց առաջնոյն համեմատ (գրուած 28 Նոյ. 1772 ի Կ. Պոլիս, Արութիւն Պետանեան Կ. Պոլսեցիէն առ Սարգ. Աբբ. ի Մարսիլիա կամ ի Հռոմ:) «Սամուէլ Վ. ն ի Նոյ. 7 ին եկն ի Պրուսայու, եւ ըստ քոյդ է եղանակ գալստեան նորին ի ձեռն նոյն արանց՝ որովք դու, եւ նպատակն՝ յոր դու չուեցեր. ժամանակն մերձ ընդ մերձ, երբ առաջինն ելանէ նաւ. բայց յոր նաւահանգիստ ելանելն տակաւին անյայտ, զի յաջողման պատրաստ նաւու սպասէ՝ ուր եւ գնայցէ նաւն, որ ողջունեաց մեծաւ սիրով, եւ ընդ աճապարելիդ հիացաւ, որոյն դժուարացաւ եղանակ ելից.